

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱԿԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (1921—1938 թթ.), կազմող Ս. Ա. Բեհրույան, խմբագիր՝ քան. գիտ. դոկտոր Ա. Գ. Մարտյան, Երևան, ՀՀ Կառավարությանն առընթեր Արխիվային գործի վարչություն, 1994, 348 էջ

Յոթ տարի հետո՝ քաանմեկերորդ դարամուտին, լրանում է Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի, ընդունման և Հայոց Առաքելական եկեղեցու հիմնադրման 1700-ամյակը: Ինչ խոսք, դա լինելու է ոչ միայն Հայ եկեղեցու և հայ ժողովրդի, այլև համայն աշխարհում քրիստոնեության տարածման և քրիստոնյա ազգերի հոգևոր ու մշակութային մեծ տոներից մեկը: Թվում է, որ այդ հիշարժան տարեյիցը պիտի ծառայի քրիստոնյա ժողովուրդներին միմյանց շուրջ համալսելու, իրար եղբայրական օգնություն ցույց տալու և միաժամանակ բարիդրոսցիական հարաբերություններ ստեղծելու գործին:

Քրիստոնեության ընդունումից ի վեր հայ ժողովուրդը, որ ճակատագրի բերումով շրջապատված է եղել այլադավան ու այլակրոն հարևաններով, որոնք դարեր շարունակ բռնի ուժով փորձել են կրոնափոխ անել և ուժացնել նրան՝ նրա երկրին ու հարուստ մշակույթին տիրանալու նպատակով, կարողացել է իր աստվածապաշտ հոգով ու՝ մաքուր խղճով, կորուսների ու գոհերի գնով դիմակայել ու քրիստոնեական անմար ճակատով բարոյապես հաղթահակած դուրս գալ այդ օրհասական արհավիրքներից: Հայ ժողովրդի պես Հայոց եկեղեցին ևս բազմաթիվ ու բազմապիսի փորձությունների է ենթարկվել, մաքառել է դարեր շարունակ, ունեցել վերելքների ու վայրէջքների, հաջողությունների ու անհաջողությունների, թուլեցների ու անկումների դարաշրջաններ: Սակայն այդ բոլոր վայրկեանների ընթացքում քայլել է իր ժողովրդի հետ, պետականության անկումից հետո շուրջ վեց դար ստանձնել նաև քաղաքական իշխանության պարտականությունների կատարումը և կազմակերպել է հայ ժողովրդի մաքառումներով ու ոգորումներով լի առաջընթացը միջնադարյան դժոխակ խավարամոլությունից մինչև մեր «լուսավոր» դարը:

Սակայն, այդ ամենից հետո, Հայոց եկեղեցին բռնությունների ու հալածանքների մի շրջան էլ ապրել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, հատկապես այդ կարգերի գոյության առաջին երկու տասնամյակների ընթացքում: Այդ տարիներին Հայաստանի ֆուլշիկյան կուսակցություն

ըն, լինելով համամիութենական համաճում կուսակցության «մարտական ջոկատներից» մեկը, իր ամենօրյա գործունեության ընթացքում, առաջնորդվելով նրա վերադաս մարմնի՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով ու հրահանգներով, նոր կարգերի հաստատման առաջին իսկ օրերից իր ձեռքն է վերցնում երկրի ղեկավարման լծակները և իր կամքը թելադրում կառավարությանն ու օրենսդիր մուս մարմիններին: Նա, իր առաջնահերթ խնդիրը համարելով մարքս-լենինյան գաղափարների տարածումը և դրանցից բխող աշխատավորների կոմունիստական ու աթեիստական դաստիարակությունը, այդ նպատակին հասնելու համար դիմում է ամեն տեսակի միջոցների, ընդունում է մի շարք դեկրետներ ու որոշումներ, որոնցով սահմանափակումներ են մղտցրվում եկեղեցու գործունեության մեջ: Այդ դեկրետներն ու որոշումները կարծեք թե արտաքուստ ոչ մի վատ բան չունեին իրենց մեջ, բացի աշխատավորության շահերի պաշտպանությունից, սակայն ներքուստ դրանք պարունակում էին եկեղեցու հիմքերը խարխուլելու նախադրյալներ: Այդ փաստաթղթերը ոգեվորում էին գաճազան աթեիստական կազմակերպությունների անդամներին ու եկեղեցու նկատմամբ անբարյացակամորեն տրամադրված տարրերին՝ իրենց սանձազերծ գործողությունները հեշտությամբ ու աներկյուղ կատարելու: Եվ այդպես, 1920 թ. դեկտեմբերի 17-ից սկսած, երբ ընդունվում է «Հոգևոր հաստատությունների և պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին» առաջին դեկրետը, հալածանքներ են սկսվում Հայոց եկեղեցու և հոգևորականության դեմ: Այդ և դրան հաջորդող մուս դեկրետներով ոգևորված տեղական իշխանության մարմիններն ու նրանց ներկայացուցիչները սկսում են խլել ու թալանել եկեղեցու ինչքն ու կալվածքները, քառմանի ու սաղիչ գործողություններ կատարել նշանավոր հոգևփրականների ու եկեղեցական գործիչների նկատմամբ: Այդ գործողությունները, ավելի սաստկանալով ու լայնածավալ բնույթ ստանալով, շարունակվում են ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչպես և դրանից հետո:

Այդպիսով, Հայ եկեղեցու անցած ուղին 1700 տարիների ընթացքում հաղթանակների հետ մեկտեղ լի է եղել նաև նահանջներով ու մեծ մարտիրոսություններով, որոնք համաշխարհային քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ եզակի ու յուրօրինակ էջեր են կազմում, և դրանք պետք է գրվեն ու սերունդներին ավանդվեն մինչ այդ մեծ հուբեյանը: Այժմվահանց այդ տոնին նախապատրաստվելը ոչ միայն Հայոց եկեղեցու, այլև մեր նորաստեղծ պետականության, Սփյուռքի համայնքների և հասարակական ու քաղաքական կազմակերպությունների, գիտական հաստատությունների, ողջ հայ ժողովրդի գործն է: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արդեն արվում են. հրատարակության է պատրաստվում «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը, Սակայն, լավ կլինի, որ դրա հետ մեկտեղ նորովի գրվի Հայոց եկեղեցու ամբողջական պատմությունը, տպագրվեն հայ առաջատար եկեղեցիների ու նրանց երևելի դեմքերի վարքը ու գործունեությունը վերահանող գրքեր, պատրաստվեն հայոց առաջյալների ու կաթողիկոսների կենսագրություններն ամբողջացնող գիտական մի լուրջ հրատարակություն և այլ արժեքավոր աշխատություններ:

Այդպիսի արժեքավոր հրատարակությունների շարքը պետք է դասել նաև «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» խորագրով նորերա լույս տեսած ժողովածուն, որն իր տեսակի մեջ ուշագրավ երևույթ է մեր եկեղեցու պատմության գործընթացում: Բայց նաև մեր ու շնորհակալ գործ է կատարել նրա կազմողը՝ Հայաստանի Հանրապետության արվեստի, գրականության ու մամուլի փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի տնօրեն, Հայոց եկեղեցու պատմության նորագույն շրջանի պատմության հմուտ գիտակ Սանդրո Բեհրտոյանը՝ տարբեր արխիվներից հավաքելով, դասդասելով և ի մի բերելով այնտեղ տպագրված վավերագրերը: Դրանք խմբագրել և ժողովածուի համար փաստալից ու ընդարձակ առաջաբան է գրել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Արշակ Մադոյանը: Այն լույս է ընծայել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչությունը:

Հիշյալ փաստաթղթերը, որոնք Հայոց եկեղեցու նորագույն շրջանի պատմության արժեքավոր վավերագրեր են, ժամանակին գրվել են Ամենայն Հայոց կաթողիկոսների, Գերագույն հոգևոր խորհրդի անդամների, եկեղեցական գործիչների ու բարձրաստիճան հոգեվորականների, եկեղեցու սպասավորների, ինչպես և աշխարհի մարդկանց ձեռքով: Դրանք գրվել են Խորհրդային իշխանության առաջին երկու տասնամյակների ընթացքում եկեղեցու նկատմամբ թույլ տրված ապօրինությունների ու ամոթալի գործողությունների դեմըն առնելու նպատակով: Այդ վավերագրերը

հիմնականում գեկուցագրեր, դիմումներ, խնդրագրեր ու տեղեկագրեր են՝ հղված Հայաստանի կառավարությանն ու գերագույն օրենսդիր մարմիններին, բարձրագույն ատյաններին, ներքին գործերի նախարարության ղեկավարներին և այլ օղակների: Այդ վավերագրերից առաջինը. թվագրված է 1921 թ. ապրիլի 28, իսկ վերջին 190-որդ՝ 1938 թ. ապրիլի 22: Այդ ժամանակահատվածում, որն ընդգրկում է շուրջ երկու տասնամյակ, Հայոց եկեղեցին շատ ծանր պահեր է ապրել: Դրանում համբավում են, երբ ծանոթանում են ներկա հատորի նյութերին, որոնց տակ դրված են շատ ու շատ սրբազան մարդկանց անուններ՝ սկսած Ամենայն Հայոց կաթողիկոսներ Գևորգ Ե-ի, Խորեն Ա-ի, ինչպես և արքեպիսկոպոսներ Գևորգ Չորեքյանի, Գարեգին Հովսեփյանի, Տիրայր Մուշկամբարյանի, Բագրատ Վարդապարյանի, մեծանուն հայազետ Ստեփանոս Մախխաջյանցի՝ ստորագրություններից, մինչև Հայաստանի ամենահեռավոր ու խոլ բնակավայրերի աննշան եկեղեցիների ծխատեր քահանաների ստորագրությունները, որոնցից թերևս հիշատակենք Խաչիկ գյուղի քահանա Հակոբ Խաչատրյանին: Նրանք բազմաթիվ փաստերով ու վկայություններով հաստատում են երկրում տիրող հակաեկեղեցական իրավիճակը և բողոքարկում դրա դեմ, խնդրում Հայաստանի օրինապահ մարմինների ղեկավարներին՝ վերջ տալու եկեղեցիների ու նրանց սպասավորների դեմ ծավալված անմարդկային ու գեալույթ ահագնացող վայրագություններին:

Այդ նյութերը նաև ամբողջական պատկերացում են տալիս քսաներորդ դարի երկրորդ քառորդին Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող եկեղեցիների գործունեության մասին: Դրանցում հետաքրքիր ու արժեքավոր փաստեր են ներկայացված Արարատյան, Ծիրակի, Սյունյաց, Արցախի, Վիրահայոց, Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի և Աստրախանի ու այլ թեմերի գործունեության վերաբերյալ: Օրինակ, Դարաբաղի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսի Գերագույն հոգևոր խորհրդին հղած 1929 թ. փետրվարի 11 թվակիր հաճառոտ գեկուցագրից իմանում ենք, որ Արցախում այդ ժամանակ եղել են 18 վանք և 112 եկեղեցի: Այդ 18 վանքերից «ներկայումս խնամքով պահվում են 7 վանք,— գրում է նա՝ թվարկելով դրանց անունները,— իսկ մնացած 11 վանքերը խաբստ կորստից փրկելու համար գուրկ ենք որևէ բան անելու»: «Թեմումս եղել են 112 եկեղեցիներ՝ 164 հայկական գյուղերով,— շարունակում է նա:— Առ մեկն փետրվարի 1929 թ. վերացված են 79 եկեղեցիներ, որոնք վեր են ածվել ակաթանոցի, խրճիթ-ըմթերցարանի, դպրոցի և շտեմարանի, 6 եկեղեցի կիսավեր վիճակում են. մնացած 27 եկեղեցիներն էլ փակման վտանգի մեջ են: Քահա-

նաներ թեմուն 1928 թվի սկզբում եղել են 97-ը, որոնցից վախճանվել են 3 հոգի, երկուսը թաղվել են եկեղեցական ձևով, մեկը՝ քաղաքացիական: 11 քահանա հեռացել են թեմիցս, այլ թեմերում են պաշտոնավարում: Առ 1-ն փետրվարի 1929 թվի հետացել են իրենց կոչումից ու քահանայությունից 62 քահանաներ, ներկայումս կան 22 քահանաներ, որոնք ծայր աստիճան հուսահատ վիճակում են» (էջ 172):

«Զնայած անակնկալներով լի մեր կյանքին,— շարունակում է թեմի առաջնորդը,— մեր կոչման և պարտավորությանց խոր գիտակցությամբ՝ մեր կողմից ոչինչ չի պակասել և խնայվել անելու հօգուտ եկեղեցվո պահպանության և քահանայոց հուսադրության համար, քայց և այնպես ընդհանուր պատկերը վերոգրյալն է, որ հետևանք է ընդհանուր կացությանց»: Իսկ այդ «ընդհանուր կացությունը» հետագայում էլ ավելի է վատանում, եկեղեցիներն ու վանքերը տարեցտարի ամալանում ու ավերվում են:

Հայ եկեղեցու մեկ այլ սպասավոր՝ Նովոռուսիյսկի ծխատեր Գեորգ քահանա Օրդուխանյանը Ամենայն Հայոց կաթողիկոսին 1924 թ. փետրվարի 7-ին գրած դիմումի մեջ ասում է. «Մեր եկեղեցին վտանգի մեջ է, մեր սուրբ հավատը ոտնակոխ է լինում, մանավանդ վտանգի մեջ է մեր խելը ու կրակ ազգի ամբողջությունը: Բացատրել թե ի՞նչ է կատարվում կարիք չկա, քանի որ Քո հայրական արտասավից աչքերը տեսնում են ամեն բան: Տեսնում են անշուշտ, որ քուրդն ու թուրքը, պարսիկն ու հույնը չեն այլևս մեր բազմաչարչար եկեղեցին հալածողը, այլ մեր իսկ եղբայրներն ու մանավանդ մեր հարազատ զավակներն են, որոնք լցված անծայր օտարությանբ՝ մոռանում են կամ չգիտեն իսկ այն ահագին ծառայությունը, որն արել են մեր ազգին մեր եկեղեցին ու հոգևորականությունը, և չեն ուզում գնահատել կամ չեն հասկանում այն չտեսնված ահագին նշանակությունը, որ միմիայն մեր եկեղեցին իբրև մի ամուր շաղկապ դարերի ընթացքում պահպանել է մեր ազգի ամբողջությունը, պահպանում է այժմ էլ և պահպանելու է ապագայում: Ի՞նչ կլինի մեր ազգի այն անթիվ, անհամար հատվածների դրությունը այսուհետև, որոնք ցրված են աշխարհի չորս կողմը, որոնք մոռացած են մեր լեզուն, մեր սովորույթները, մեր պայմանները, միայն և միայն հավատի և եկեղեցու միջոցով կապված են մնում մեր կենտրոնի հետ» (էջ 49—50):

Հիշյալ դիմումը գրելուց շուրջ մեկ տարի անց Գ. Օրդուխանյանը կալանավորվում և քստրվում է Տոմսկի նահանգի Նորին ցրտաշունչ քաղաքը: Նա այնտեղից 1925 թ. հունվարի 3-ին դարձյալ նամակ է գրում Հայոց Հոգևոր Առաջնորդին և ներկայացնում իր

և իր ընտանիքի կակեցուցիչ վիճակը և «օրվա հացի խնդիրը», «հայ աքսորված քահանայի անելանելի և հուսահատական դրությունը» (էջ 60):

Ծանր է եղել նաև մյուս բանտերում, ու աքսորավայրերում գտնվող հայ եկեղեցականների վիճակը: Այդ բանն հավաստող տասնյակ փաստաթղթեր ենք գտնում ժողովածուում: Ահավասիկ դրանցից մեկը. «Վեհափառ Տեր,— գրում է Արարատյան թեմի Ուշի գյուղի քահանա Մկրտիչ Գրիգորյանի այրին,— Տիրուհի Թամար Գրիգորյանն խնդրում են Ձերդ Վեհափառության, որ այս եղավ 6 տարի է, որ աքսորված է Մկրտիչ քահանա Գրիգորյանը կազով քաղաքը, հիմա նամակ է գրել ինձ որ՝ վերին աստիճանի ներ դրության մեջ են, խնդրում են ինձ օգնություն: այդ օգնությունները իմ ուժից վեր լինելով, աղերսանոք համբերում են Ձերդ Վեհափառության սուրբ աջը և խնդրում են մի օգնություն: Աքսորման պատճառը եղել է նախքը՝ 500 ոտրի, չկարողանալով տալ այդքան գումար, ուստի որոշել են աքսորել, արդեն այս վեց տարվա ընթացքում ունեցած ամբողջ տան մեջը ծախել են և ուղարկել իրեն, իսկ հիմա այլևս ոչինչ չունեն, մնացել էր մի կով, նա էլ եկան տուրքի դիմաց վերցրին ու տարան, այնպես որ ոչ մի հնարավորություն չունեն օգնելու, նրա միակ փրկության օգնությունը մնացել է Ձերդ եհափառության աջակցությունը» (էջ 283):

Աքսոր, տաժանակրություն, քաղց ու մերկություն, սովալլուկ ու աղքատ ընտանիք, գաղջ ու ահաբեկիչ շրջապատ. ահա այն մղձուկորտը, որի մեջ իրենց կյանքի վերջին օրերն են անցկացնում Հայոց Առաքելական եկեղեցու նվիրյալ սպասավորները խորհրդային կարգերի հաստատումից հետո, նրա գոյության անաջին երկու տասնամյակների ընթացքում: Նրանք երկյուղածությամբ բողոքել են իրենց այդ ծանր վիճակի համար պետական իշխանության մարմիններին, սակայն՝ «ձայն բարբառոյ յանսպաստի» Հայոց սրբազան հայրերը նույնպես ոչնչով չեն կարողացել օգնել մեր եկեղեցու նվիրյալ սպասավորներին, և նրանց բոլորի ձայները նվաղել են ու համրացել անտարբերության ու անժամանակ մահվան սուր ճիրանների մեջ:

Նման մի օրինակ է Ծիրակի Հայոց թեմի Առաջնորդ Արտակ եպիսկոպոսի «Ամենախոնարհ հայտարարությունը» Նորին սուրբ օծություն Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Գեորգ Ե-ին: Նա գրում է. «Դարձյալ ստիպված են Ձեր Հայրական սիրտը վշտացնել, առաջ բերելով այստեղ այն ծանր և սուսկալի դրությունը, որի մեջ ապրում է թեմիս քահանայությունը: Արդեն հայտնի է, որ Լենինականում հունվարից կազմված է անաստվածների կոլեկտիվ, որոնք գյուղերում ունեն իրենց ճյուղերը և ամենասուսկալի ճնշումներով

հավատացյալների վերա գործ դնելով՝ գրավում են եկեղեցիները և ոչնչացնում: Հավատացյալները այնպիսի պայմանների մեջ են գտնվում, որ ոչ ոք իրեն իրավունքը պաշտպանել չի կարողանում՝ ո՛ւմ դեմ բողոքի և ո՛ւմ բողոքի» (էջ 147): «Քահանայությունը անկարագրելի վիճակի մեջ է գտնվում,— այնուհետև շարունակում է թեմի Առաջնորդը:— Անտանեյի հարկերով ծանրաբեռնել են: Քահանաների որդիք դուրս են անում ոչ միայն դպրոցներից, այլև հասարակ աշխատավոր քարտաշությունից ու բանվորությունից: Դոնադոնանի Եղիշե քահանա Պապիկյանը թողել է քահանայությունը, եկեղեցին էլ հանձնել, որ իր երեխաներին փրկել կարողանա, բայց նորան առաջարկել են վերադառնալ հանել և հեռանալ հոգևորականությունից, այլապես հողերը գրավելու են» (էջ 147):

Հայտարարության հեղինակն, այնուհետև, Ծիրակի թեմի մասին նման բազմաթիվ փաստեր բերելով, վերջում ավելացնում է. «Այսպիսի ծանր վիճակի մեջ է ամբողջ քահանայությունը, աակայն չեն կարողանում գալ և իրենց ցավը հայտնել: Այսպես գնալով մի երկու ամսից ոչ մի քահանա չենք ունենա: Կտրված է ամեն հարաբերություն գյուղերի հետ: Գործակալները իրավունք չունեն գյուղերը գնալու, իսկ քահանայությունը ճնշման տակ ընկճված է: Տաճիկների ներխուժելով՝ բոլոր մեծերը. թե մարդիկ թե կանայք շրջանիս մեծ մասի գյուղերի՝ կոտորվել են: Մնացել էին փախուստի դիմելով երիտասարդությունը: Նրանք էլ բոլորը կուսակցական են դարձել և կոլեկտիվներ կազմել: Հետևապես եկեղեցի գնացող կամ հավատացյալներ չկան բոլորովին և կամ շատ քիչ կան, այն էլ նկարագրված բռնությանց ու սուկա:ի հատկատրվության ենթակա: Հավանական է մինչև մի երկու ամիսը և եհնականի շրջանում եկեղեցի չնճա և քահանայությունը լռելյայն անհայտանա» (էջ 147—148):

Նույն վիճակն է տիրել նաև մյուս թեմերում: Այդ են ապացուցում բոլոր կողմերից դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին գուժող թեմակալների դիմում-բողոքներն ու զեկուցագրերը: Մենք չենք ուզում այստեղ մանրամասնորեն անդրադառնալ այդ փաստաթղթերին ու վերլուծել դրանք: Թողնում ենք, որ ընթերցողն ու մասնագետներն իրենք ծանոթանան դրանց բովանդակությանը և անեն համապատասխան եզրակացություններ: Միայն նշենք, որ 1920—30-ական թվականներին եկեղեցու դեմ իշխանությունների ծավալած պայքարը համատարած բնույթ է կրել թե բուն Հայաստանում և թե Անդրկովկասի մյուս հայաբնակ վայրերում: Այդ նյութերից իմանում ենք, որ 1938 թ. Հայաստանում արդեն փակվել էին 800-ից ավելի, իսկ Վրաստանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում, Հեռավոր

Արևելքում, Բուսաստանում, ԽՍՀՄ եվրոպական հանրապետություններում և այլուր նաև ոչնչացվել էին հարյուրավոր հայկական եկեղեցիներ, յուրացվել ու թալանվել դրանց շարժական ու անշարժ գույքը, էլ չենք խոսում նյութական ու մշակութային այն արժեքների, նրանցում պահվող այն նկարների, գրքերի, մատյանների, ձեռագրերի, եկեղեցական գործիչների գրավոր ժառանգության մասին, որոնք ստեղծված թոհուրոհի զոհ են դարձել ու անհետ կորել: Այդ տասնևութ տարիների ընթացքում հալածվել, արքայրվել ու գնդակահարվել են բազմաթիվ հոգևորական գործիչներ, որոնց մեծ մասը եղել է ժամանակի կրթված ու զարգացած, գրագետ ու բանբան մարդկանցից: Այդ բանը մեկ անգամ ևս վկայում են նրանց իսկ ձեռքով գրված դիմումներն ու բողոքագրերը, որոնցից շատերը տեղ են գտել ներկա ժողովածուում: Ընթերցողը չի կարող անտարբերությամբ անցնել ադ վավերագրերի կողքով: Դրանցից շատերի մեջ վաղուց կյանքից հեռացած լուսավոր մարդկանց բեկված ու խելված ճակատագրեր են, որոնք խոշտանգվել են հանուն սուրբ հավատի ու եկեղեցու: Նրանք եղել են մաքուր, իրենց գործին նվիրված, հաճախ ընչազուրկ կրոնավորներ, ովքեր միայն սեր ու հավատ են սերմանել մարդկանց հոգիներում, Կարծես թե իրենց այդ դիմումներում նրանք մեղանշում ու ապաշխարում են իրենց ընդգործած մեղքերի ու չկատարած հանցանքների համար և թողություն ու ներում են աղերսում նորընծա անասովածներից:

Գրքում կարելի է գտնել Սփյուռքի Հայոց եկեղեցական թեմերի առաջնորդների ու առանձին անհատների նամակներն ու գրությունները՝ ուղղված Մայր Աթոռի Վեհափառ Հայրապետներին՝ այս կամ այն խնդրի շուրջ: Դրանք ևս առնչվում են այն մահաարսուտ տարիներին Հաստատում տիրող սափրիչությունների ու բանասրկությունների հետ և նոր լույս են սփռում արտասահմանյան հայ համայնքների եկեղեցիների գործունեության այդ շրջանի վրա:

Ինչպես նշեցինք վերը, գրքում գետեղված վերջին փաստաթուղթը կրում է 1938 թ. ապրիլի 22 տարեթիվը, որն համընկնում է Արժանահիշատակ Խորեն Ա Կաթողիկոսի առեղծվածային մահվան հետ: Այդ ժամանակաշրջանը ներառում է բոլշևիկյան կուսակցության՝ եկեղեցու և կրոնի դեմ ծավալված պայքարի առաջին փուլը, երբ ծանր կացության մեջ էր ընկել Հայոց եկեղեցին, երբ այլևս չէին գործում Խորհրդային Միության սահմաններում գտնվող շատ ու շատ եկեղեցիներ, փակվել էին գրեթե բոլոր թեմերը:

Ըստ գրքում ներկայացված հավաստի վավերագրերի, ծանր ու ողբերգական է եղել Հայոց եկեղեցու պատմությունը այդ երկու տասնամյակների ընթացքում: Դրությունը գրե-

թե նույն է մնացել նաև հաջորդ տասնամյակներում, միայն փոխվել, ավելի ցրտացել ու կատարելագործվել են կոմունիստական կուսակցության՝ եկեղեցու նկատմամբ ունեցած վերաբերմունքի ձևերն ու մեթոդները: Սակայն այդ քաղաքականությունը թե ինչպես է դրսևորվել և Հայոց եկեղեցու կողմից ինչպես է ընդունվել, կարող են ցույց տալ դարձյալ արխիվային վավերագրերն ու փաստաթղթերը, որոնք մինչև այսօր մատչելի ու ծանոթ չեն եղել մասնագետներին, Հայոց Եկեղեցու պատմությանը զբաղվողներին ու ընթերցող լայն շրջաններին:

Մեզ թվում է, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող ներկա ուշագրավ ու արժեքավոր ժողովածուն ամբողջությամբ չի ամփոփում 1921—1938 թթ. Հայոց Եկեղեցու պատմության հետ առնչվող բոլոր փաստաթղթերը: Անհրաժեշտ է այդ մնացորդը նույնպես ի մի ժողովել և հետագա տավանայակներում ստեղծված փաստաթղթերի հետ միասին տպագրել որպես ներկա գրքի հերթական հատոր: Միայն այդ նախապարհով կարելի է կորստից փրկել շատ կողմերով ուշադրության արժանի և արժեքավոր արխիվային վավերագրերը, որոնք հավաստի և առատ նյութեր են պարունակում Հայոց եկեղեցու նոստրոյն շրջանի պատմության, հետևաբար նաև հայոց պատմության ցարդ չուսումնասիրված ու անծանոթ էջերը գրելու համար: Այդ հայրենագույն գործը, մեզ թվում է, պետք է շարունակի սույն հատորը խնամքով կազմող, արխիվային գործի քաջա-

գիտակ ու ծանոթ Սանդրո Բեհրուդյանը:

Վերջում ուզում ենք խորին ակնածանքով ու մեծարանքով նշել երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ծաղրագույն հատորաբար վազգեն Առաջինի անունը, որի ներդրած ջանքերը ներկա ժողովածուի լույսընծայումը կազմակերպելու և իրականացնելու գործում մեծ են եղել: Սակայն, ցավով պետք է ասել նաև, որ գրքի տպագրությունը համընկավ Վեհափառ Հայրապետի ծանր հիվանդության ու նրա կյանքի վերջին օրերի հետ, և երևի Հայոց Եկեղեցու Մեծ շինարարը, այժերը զոցցոյց, առաջ, չհաւցրաց նույնիսկ տեսնել իր իսկ նախաձեռնությամբ հրատարակված այս մեծադիր հատորի ազդօրինակը:

Միաժամանակ շնորհակալությամբ պետք է նշել, որ ներկա ժողովածուն հրատարակվել է ի հիշատակ Հայ եկեղեցու անկախության ջերմ պաշտպան Հակոբ Տեր-Մելքոնյանի (1837—1972), մեկնաստությամբ գնդապետ Հարություն և Ալիս Սաչաքյանների:

Հուսով ենք, որ Հայոց Առաքելական եկեղեցու նոր վեհափառ հայրապետի նախաձեռնությամբ լույս կտեսնի այս արժեքավոր ժողովածուի երկրորդ հատորը ևս, որն իր նախորդի հետ մեկտեղ մի յուրօրինակ նվեր Նիկիի Հայաստանում քրիստոնեությանը՝ որպես պետական կրոնի, ընդունման ու տարածման 1700-ամյա հոբելյանին:

Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ